ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ԲՄԾՁԲ-7/5-5 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

04 .06.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից «Պահապան» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 06.04.2018թ. կնքված № ԲՄԾՁԲ-7/5-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը և այն փաստը, որ «Պահապան» ՍՊԸ-ն համաձայնվել է գնման ժամանակացույցում ներառված դերձակի ծառայություն / կոստյում՝ բամբակյա, կեպիով/ ծառայության միավորի գինը նվազեցնել 3744 ՀՀ դրամի, իսկ դերձակի ծառայություն /կոստյում՝ ձմեռային դաշտային/ ծառայության միավորի գինը նվազեցնել 14500 ՀՀ դրամի փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում մատուցել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի կողմից մատուցվող Ծառայության գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 147380000 (հարյուր քառասունյոթ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուի մատուցած Ծառայությունների դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագիրն ուժի մեջ է կնքման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայությունի մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Պահապան» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Ավան Քուչակ 16/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00982379
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

ՀՀ դրամ

Հ/հ	ԳՄԱ կոդը	Գնման առարկան	Չ/Մ	Միավորի գին	Քանակ	Գնման ժամանակացույց, ըստ 2020թ. ամիսների, ոչ ուշ քան 30.10.2020		
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	98391120/12	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ բամբակյա, կեպիով	Լ-կ	3744	20000	2000	9000	9000
2	98391120/17	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ ձմեռային դաշտային	Լ-կ	14500	5000		3500	1500

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, ոչ ուշ քան 10.12.2020
1	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ բամբակյա, կեպիով	7488000	41184000	41184000	41184000	74880000	74880000	74880000
2	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ ձմեռային դաշտային		50750000	50750000	50750000	72500000	72500000	72500000

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Պանարմենիան» ՍՊԸ տնօրեն

«ՊԱՆԱՊԱՆ»
«ПАНАРМЕНИАН»
«PANARMAN»

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ